

<b>Առարկա</b>	Ինֆորմատիկա
<b>Դասարանը</b>	6
<b>Ուսուցիչ</b>	Ա. Մաթևոսյան
<b>Դասի թեման</b>	§ 3.8 Մակագրության կցումը նկարին

**Դասի նպատակները՝**

*Կրթական* – զարգացնել ստեղծարարի հետ աշխատանքի և նշված տիրույթում տեքստ մուտքագրելու հմտությունները

*Դաստիարակչական* – ձևավորել ցանկալի արդյունքին հետևողականորեն և քայլ առ քայլ հասնելու բնավորություն

*Զարգացողական* – մուտքագրվող տեքստի բովանդակության միջոցով նպաստել միջառարկայական կապերի ամրապնդմանը

**Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ** – համակարգիչներ, գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչներում ուրվագծային քարտեզների քոց տարբերակներ, վիճակահանության թերթիկներ:

*/\*Դասին ցանկալի է հրավիրել աշխարհագրության ուսուցչին*

**Դասի կառուցվածքը** – ԽԻԿ

**Դասի մեթոդները՝** մտազրոհ, համակարգչային ցուցադրություն, կարճ դասախոսություն, գործնական աշխատանք

**Դասի ընթացքը՝**

1. Հաշվառում:/1ր/
2. Տնային առաջադրանքի ստուգում, անհասկանալի հարցերի պարզաբանում:/3ր/
3. Նկարին մակագրություն կցելու գործընթացի կարևորում/մտազրոհ /Խ//3ր/
4. Նկարին մակագրություն կցելու գործընթացի համառոտ ներկայացում համակարգչային ցուցադրությամբ ուղեկցվող կարճ դասախոսության մեթոդով: /Ի/ /5ր/
- 4.Վիճակահանության միջոցով խմբերի ձևավորում/ 1ր/
5. Գործնական առաջադրանքի ներկայացում/**Կ/ /5ր/**
  - յուրաքանչյուր խմբի տրվում է իրենց ծանոթ որևէ մայր ցամաքի ուրվագծային քարտեզ/ կարող է տրվել նաև ՀՀ վարչական բաժանման ուրվագծային քարտեզ/: Աշակերտները պետք է տարբեր գույներով գունալցեն վարչական բաժանումները և կցեն մակագրություններ.
    - Պետության անվանումը
    - Մայրաքաղաքը

- Այլ տվյալներ  
/ՀՀ քարտեզի դեպքում տարբեր գույներով գունալցեն մարզերը,  
կշեն մարզկենտրոնները, խոշոր քաղաքները և այլն/

6. Առաջադրանքի կատարում /20ր/

Հետևել աշխատանքի կատարման որակին, գույների համդրությանը, տեքստերի պարամետրերին և այլն: Աշխարհագրության ուսուցիչը ևս կարող է հետևել աշխատանքի ընթացքին, անհրաժեշտության դեպքում ուղղորդել աշակերտներին:

7. Աշխատանքների ներկայացում, քննարկում և գնահատում /7ր/

8. Տնային առաջադրանքի հանձնարարում՝ § 3.8-ը սովորել, կատարել <<Լաբորատոր աշխատանք 9>>-ը:

**Դասի ավարտին աշակերտը պետք է**

- Իմանա նկարին մակագրություն կցելու և այն խմբագրելու հնարավորությունները
- Կարողանա նկարին մակագրություններ կցել և անհրաժեշտության դեպքում դրանք խմբագրել
- Տիրապետի ստեղնաշարից օգտվելու հմտությունների
- Գիտակցի այդ հմտությունների կարևորությունը

**Դասի ընդհանրական արդյունքները**

*Դասի դրական կողմերը*

---

---

*Դասի թերությունները*

---

---

*Առաջարկություններ*

---

---